| | | | |
|---|---|---|---|
| ժզ. ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին. | v | | |
| ժէ. խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված նորմերին. | | v | |

«ա»-ից «դ» չափանիշները դիտարկելով՝ հանձնաժողովն ազատ շարադրանքով պետք է նկարագրի հաստատության տարածքի, շենքի ու շինությունների, գույքի անվտանգ շահագործման, սաների և աշխատակիցների անվտանգ կենսագործունեության ապահովման և առողջության պահպանման հետ կապված վիճակը և առկա խնդիրները: Դիտարկման շրջայց կատարելիս հանձնաժողովը պետք է նկարագրի առկա իրավիճակը և արձանագրի բացահայտված շեղումներն ու անհամապատասխանությունները: Դիտարկում-փաստագրումն իրականացնելիս հաստատությունը պետք է առաջնորդվի համապատասխան նորմատիվային և իր ներքին փաստաթղթերով:

«ա» չափանիշի համար անհրաժեշտ է իրականացնել դիտարկում-փաստագրում և արձանագրել հաստատության շենքի ֆիզիկական վիճակը ու նշել, թե ինչպիսի վերանորոգման կարիք ունի այն՝ կապիտալ, մասնակի կամ ընթացիկ: Այնուհետև ցանկալի է մանրամասնել վերանորոգման կարիքները և տալ դրանց մոտավոր ֆինանսական գնահատականը:

«բ» չափանիշի համար դիտարկում-փաստագրման միջոցով պետք է արձանագրել, թե արդյոք շենքը կայուն է հետևյալ վտանգների կամ դրանցից որևէ մեկի ազդեցության նկատմամբ (ուժեղ քամիներ, սողանքներ, երկրաշարժեր, հրդեհներ, խոնավություն և այլն):

«ժբ»- ից «ժե» չափանիշների համար ևս պետք է իրականացնել դիտարկում-փաստագրում և հաջորդիվ անդրադառնալ սաների և աշխատողների տարհանման խնդիրներին: Կցել տարահանման պլանի լուսապատճենը:

-----------------------------------------------------------------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------

«ժզ» չափանիշի համար կցել լիցենզիայի լուսապատճենը և լրացնել ստորև բերված աղյուսակը.

| Խմբասենյակ | Խմբասենյակի մակերեսը (քմ) | Մեկ սանին բաժին ընկնող մակերեսը (քմ) | Նորմերից պակաս կամ ավելի մակերեսը (քմ) |
|---|---|---|---|
| Կրտսեր 1 | 48(քմ) | 2,4(քմ) | |
| Կրտսեր 2 | 48(քմ) | 1,6(քմ) | |
| Միջին ա | 48(քմ) | 1,6(քմ) | |
| Միջին բ | 48(քմ) | 1,6(քմ) | |
| Ավագ | 48(քմ) | 1,4(քմ) | |